բական ընել. և որովհետև ամենքն առ-հասարակ այս վիճակի մէջ ըլլալը կ'ըմ-բռնեն և համոզեալ են որ այսօր կամ ուրիշ օր մը ամբողջապէս դրամասե-ղանոյ տոմսակները պիտի վճարուին, կ'ընդունին զանոնք ըստ իրենց ա՛ժէ-քին։

Բայց ոչ նոյնպէս է թղթադրամներն-կատմամբ, որուն ներկայացուցիչ բան մը չիկայ ցէրութէ արկեղաց մէջ և ա՛ժէք ունի քանի որ ստոյգ է թէ ուշ կամ շուտ դրամով պիտի վճարուի. բայց եթէ այս ապահովութիւնը պակսի՝ վստահութիւնը կը վերնայ և թղթադրամն իր ամեն ա-ժէքը կը կորսնցնէ. կրնայ օրէնքն այն ատեն հրատարակել որ բռնի ընթացք ունենայ, և դրամ առնելիք ունեցողները ստիպեալ ըլլան այս թուղթն իր անուա-նական ա՛ժէքովը իբրև վճարումն ընդ-ունիլ. բայց չիկրնար քաղաքացեաց ա-մենայն ձեռնարկութեանցը միջամուխ ըլլալ, և ստիպել որ գործերնին իր ու-զածին պէս ընեն. զոր օրինակ չիկրնար հարկադրել խանութպան մը որ իր ապ-րանքը դրամաթղթով տայ՝ երբ վստա-հութիւն չունի, որ կամ աւելի մեծ գու-մար կ'ուզէ դրամաթղթով վախցած կորստեանը տեղ լեցընելու համար, կամ լաւագոյն կը համարի պահել իւր ապրանքը։ Ամենայն խանութպանք նոյնպէս կ'ընեն, և բնաւ գնող չիգտնու-ելով՝ երբ դրամաթուղթ վճարել պէտք ըլլայ, թուղթն իր ա՛ժէքը կը կորսընցը-նէ, և թերևս քիչ ատենէն որ և իցէ գնով ալ ուզող չըլլար։

Այսպէս կը հանդիպի ամեն անգամ որ օրէնքը իրաց բնական կարգը կ'ուզէ փոխել. ամենայն ջանիւքն հանդերձ չիկրնար բանի մը չունեցած ա՛ժէքը տալ։ Հասարակաց կարծիքը քան զա-մենայն ինքնակամ դաշնադրութիւն զօ-բաւոր ըլլալով՝ կ'ընդունի միայն իրեն համար ինչ որ արդար է և ճշմարիտ։

ՌՈՒԲԷ

Կը շարունակուի։

ԴԱՒԻԹ ԼԻՎԻՆԿՍԴԸՆ

Լիվինկսդըն յամին 1815 Սկովտիոյ պղտի գեղի մը մէջ ծնաւ. բայց աղքատ ծնողաց որդի ըլլալով, իր օրական ա-պրուստը ճարելու համար բամբակի գործատուն մը մտաւ։ Բայց որովհետև ուսման սաստիկ սէր ունէր, անոր հա-մար ամառուան մէջ ըրած վաստակէն մաս մը մէկդի դնելով ձմեռները կլաս-գոյ կ'երթար և հոն դպրոցի մը մէջ ու-սում սորվելու կը ծախէր։ Այս կերպով անցուց մինչև 25 տարուան հասակը, յորում հոգւոյն կարողութիւնքն զինքը մեծամեծ գործոց կը մղէին։ Ուստի լաւ մը հմտանալով աշխարհագրական, աս-տղաբաշխական և բնագիտական ծանօ-թութեամբք, Լոնտոնայի Միսսիոնարաց Ընկերութեան անդամ գրուեցաւ, որ յամին 1841 նախ Բարեյուսոյ Գլուխը ղրկեց զինքը. ուսկից առաջ տանելով իր ճամբորդութիւնը և քննութիւնները մինչև Ափրիկոյ խորերը հասաւ։ 1849ին Նիամի լիճը գտաւ և յամին 1851 մին-չև Զամպէզի մեծ գետին ափունքը գնաց։ Այս տասնումէկ տարուան մի-ջոց մեծ անուն հանեց Եւրոպիոյ մէջ. վասն զի մէկ կողմանէ տպագրութեամբ կը հրատարակուէին Անգղիա իր ճա-նապարհորդութեան վրայոք տուած տե-ղեկութիւններն, որոնք եղբը յամին 1853 'ի մի հատոր հաւաքեալ տպուե-ցան։

Հարաւային Ափրիկոյ ամեն կողմը լաւ մը ճանապարհորդելէն ետքը, 1856ին Անգղիա դարձաւ, ուր մեծ ընդու-ունելութիւն գտաւ իր հայրենակիցնե-րէն։ Բայց 1857 տարւոյն մարտին մէջ երկրորդ ճամբորդութեան մ'ալ ձեռք զարկաւ, նորէն դէպ Ափրիկէ։ Զամպէ-զի գետին ընթացքը բռնած սկսաւ յա-ռաջել, և այս երկրորդ ճամբորդութիւ-ը բրած հետազօտութիւններն ալ նորէն տպագրութեամբ հրատարակեց։ Յա-մին 1865 նորէն հայրենիք դառնալով,

արտաքոյ կարգի պատուով ընդունուեցաւ. իր անունը այնպէս հռչակուած էր, որ գրեթէ անձ մը չէր գտնուեր որուն անծանօթ ըլլայ։

Բայց յամին 1866 երրորդ անգամ բար 1868ին ապրիլի մէջ այդպիսի ցաւալի լուրը սուտ ելաւ, վասն զի Լոնտոնայի աշխարհագրական Ընկերութիւնը ինքնագիր նամակ մը ընդունեցաւ Լիվինկսդընէն, զոր գրած էր Զանզիպարէն 1868ին յունուարի 27ին, այս ինքն իրեն մահուան սխալ եւրոպա հասնելէն չորս ամիս եռքը։

ԴԱՒԻԹ ԼԻՎԻՆԿՍԴԸՆ

մ'ալ ճանապարհորդեց յԱֆրիկէ. և մինչև ցսեպտեմբեր 1867 ամին վրան ամենևին լուր մը չի լսուեցաւ, և ըսին թէ տեղացի բարբարոս ժողովուրդներէն սպանուեր է։ Բայց բարեբախտա-